ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 24.02.2008Թ. ԹԻՎ 24-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1. կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 3-րդ մասի՝ «ՀՀ Նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանի դիմումի հիման վրա՝ «Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 24.02.2008թ. թիվ 24-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Հաշվի առնելով ՀՀ Նախագահի ընտրության վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը վիճարկելու հետ կապված գործերի քննության՝ ՀՀ Սահմանադրության 51 հոդվածով և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածով նախատեսված առանձնահատկությունները, գործի դատաքննությունն սկսել 2008թ. մարտի 3-ին, ժամը 11.00-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցողներ նշանակել ՀՀ սահմանադրական դատարանի անդամներ Հ. Դանիելյանին, Ֆ. Թոխյանին, Հ. Նազարյանին, Վ. Պողոսյանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 9-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 4-րդ մասի՝ նշված գործը քննելիս որպես պատասխանող կողմ ներգրավել ընտրության արդյունքներն ամփոփող պետական մարմնին՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածի 4-րդ մասի հիմքերով սույն գործով որպես հարակից պատասխանողներ՝ իրենց իրավասությունների հետ կապված հարցերով, ներգրավել ՀՀ դատախազությանը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին:

6. Գործի դատաքննության նախապատրաստման անհրաժեշտությունից ելնելով՝ **պահանջել.**

ա) ՀՀ վարչական դատարանից՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրության հարցերով ներկայացված դիմում-բողոքների կապակցությամբ ընդունված դատական ակտերը.

բ) ՀՀ ԿԸՀ-ից՝

- 19.02.2008թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված Նախագահի թեկնածուների (վստահված անձանց) դիմում-բողոքների քննարկման արձանագրությունները, ընդունված որոշումները, տրված պատասխանների պատճենները,

- ըստ կոնկրետ ընտրական տեղամասերի՝ տեղեկանք ներկայացնել 19.02.2008թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված Նախագահի թեկնածուների դիմում-բողոքների հիման վրա կատարված վերահաշվարկների արդյունքների վերաբերյալ,

- առանձին հիմնավորում ներկայացնել, թե ո՞ր ընտրական տեղամասերում և ի՞նչ հիմնավորմամբ դիմում-բողոքների առկայության դեպքում վերահաշվարկ չի կատարվել.

գ) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովից՝ 2008թ. ՀՀ Նախագահի ընտրության հարցերով ներկայացված դիմում-բողոքների կապակցությամբ ընդունված որոշումները, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 20 հոդվածի 9-րդ մասի պահանջների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը.

դ) ՀՀ դատախազությունից՝ 19.02.2008թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված ընտրախախտումների կանխման և տեղ գտած դեպքերի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

ե) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից՝ 19.02.2008թ. անցկացված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված իրավախախտումների կանխման և տեղ գտած դեպքերի առնչությամբ ոստիկանության մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

7. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի 2-րդ մասի համաձայն վերոնշյալ մարմիններին հասցեագրված բոլոր պահանջների կատարման համար վերջնաժամկետ սահմանել մինչև 2008թ. մարտի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 փետրվարի 2008 թվականի
ՍԴԱՈ-19